

Ա Ռ Ա Ջ Ա Ի Ո Ր Ա Յ Պ Ա Հ Ք

Այս տարի, Առաջաւորաց Պահօր Բարեկենդանը կը զուգադիպի Կիրակի, 9 Փետրուարին, որուն յաջորդ օրը կը սկսի պահօր:

Այս հինգօրեայ պահօր սահմանուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ եւ յատուկ է միայն Հայ Եկեղեցւոյ: Կը սկսի Մեծ Պահօն երեք (կամ Զատիկէն տասը) շաբաթ առաջ եւ Զատիկին նման ունի 35 օրուան շարժականութիւն՝ Յունուար 11-էն մինչեւ Փետրուար 15:

Պահօն հինգերորդ օրը՝ Ուրբաթ օր, կը նշուի Յովնան Մարգարէի քարոզութեան եւ Նինուէի ապաշխարութեան յիշատակը՝ որպէս մեծ ապաշխարութեան օրինակ:

Ներսէս Շնորհալիի մեկնութեամբ, «Առաջաւորաց» անունը Գրիգոր Լուսաւորիչի կողմէ հրամայուած «Առաջին» պահօր ըլլալուն համար է: Ան նախքան Հայ ժողովուրդը մկրտելը եւ Քրիստոսի Լոյսով պայծառացնելը, հինգօրեայ պահօրով նախապատրաստեց զանոնք՝ Նինուէացիներու ապաշխարութեան նմանողութեամբ:

Այս պահօն Շաբաթ օրը կը տօնուի Սուրբ Մարգիտի յիշատակը, որուն համար ալ ժողովուրդը յաճախ գայն «Ս. Մարգիտի Պահօ» կ'անուանէ:

✠

Շաբաթ, Փետրուարի 15-ը տօնն է Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ եւ իր որդւոյն Ս. ՄԱՐՏԻՐՈՍԻ: Առաջաւորաց Պահօր (Ս. Մարգիտի Պահօր) կը սկսի Կիրակի, 9 Փետրուարի կէս գիշերուան 12:00-ին:

Չորեքշաբթի, 12 Փետրուարի, առաւօտեան ժամը 10:00-ին, տեղի պիտի ունենայ յատուկ ժամերգութիւն, Զրօրհնէք եւ ապա հաւաքական խոստովանանք եւ Ս. Հաղորդութիւն:

Ժամերգութենէն ետք հաւատացեալներուն պիտի հրամցուի նախաճաշ: Աստուած ընդունէ բոլորին ուխտերը:

Soorp Sarkis is on Saturday, February 15th. Fast of the Catechumens starts on Sunday, February 9th at Midnight thru Wednesday morning February 12th.

Wednesday, February 12th, 10:00 AM, Morning Service, Blessing of water & Holy Communion on the occasion of the Fast of the Catechumens (*Soorp Sarkissi Bahk*). Breakfast will be served following services.